ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզպետի ս/թ հուլիսի 1-ից 4-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ռեգեն երկրամասային շրջան գործուղման արդյունքների վերաբերյալ

ԱՅՑԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակ՝ ուսումնասիրել Բավարիայում զբոսաշրջության ոլորտում համագործակցության փորձն ու ձևաչափերը:

Մասնավորապես ուսումնական այցը հետապնդում էր հետևյալ խնդիրները՝

- Տավուշի մարզի և Ռեգեն երկրամասային շրջանի նորընտիր երկու մարզպետներին ներկայացնել Տավուշ-Ռեգեն համագործակցությունը, զարգացման ուղիները և իրականացված ծրագրերը
- Ուսումնասիրել Ռեգեն երկրամասային շրջանում գործող զբոսաշրջային տարբեր միավորների գործունեությունը՝ ուղղված զբոսաշրջության զարգացմանը և շրջական միջավայրի պահպանմանը,
- Ուսումնասիրել, թե ինչպես են համագործակցում տարբեր կառույցները, մասնավորապես տուրիստական միություններն ու համայնքներն ի նպաստ տարածաշրջանում զբոսաշրջության զարգացմանը,
- Ուսումնասիրել, թե ինչպես է իրականացվում զբոսաշրջության զարգացումը թե քաղաքային և, թե գյուղական համայնքներում,
- Ծանոթանալ "Արբերլանդ" զբոսաշրջության զարգացման կենտրոնի կողմից Բավարիայում, Բավարական անտառում և Ռեգենի երկրամասային շրջանում իրականացվող ծրագրերի հետ,
- Ծանոթանալ Բավարիայում իրականացվող Եվրամիության կողմից ֆինանսավորվող միջսահմանային (Բավարիա-Չեխիա-Ավստրիա) ծրագրերի փորձի հետ:

Այցի ընթացքում մասնակիցներն այցելեցին տարբեր համայնքներ, կառույցներ ու ծանոթացան Զբոսաշրջության զարգացման Բավարական փորձի հետ: Մասնավորապես՝ այցելություններ կատարվեցին տարբեր տուրիստական միություններ, որոնց միջոցով և օգնությամբ համայնքները զարգացնում են զբոսաշրջությունն իրենց համայնքում և տարածաշրջանում:

Գերմանիայում հիմնականում ներդրված է այն մոդելը, ըստ որի համայնքներն իրենց բյուջեներից գումար են փոխանցում Զբոսաշրջային միությանը, որպեսզի վերջինս իրականացնի զբոսաշրջության զարգացմանը նպաստող միջոցառումներ և գործողություններ, զարգացնի տուրիզմը, ոչ թե

միայն տվյալ համայնքում, այլ ընդհանուր տարածաշրջանում: Գերմանական փորձը ներ է դրվել նաև Տավուշի մարզում. ստեղծվել է “Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն ՀԿ-ն ”, որը համաձայնության հուշագիր է կնքել Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան համայնքների հետ ու համագործակցելով վերջիններիս հետ, նպաստում է Տավուշի մարզում զբոսաշրջության զարգացմանը:

Ուսումնական այցի առաջին օրը պատվիրակությանը ողջունեց Ռեգեն երկրամասային շրջանի նորընտիր դեսպան տիկին Ռիտա Ռորլը: Նա կարևորեց Ռեգեն-Տավուշ համագործակցությունը և հաստատեց, որ ինքը հետաքրքրված է այս համագործակցությամբ ու կաջակցի վերջինիս հետագա պահպանմանը և ամրապնդմանը:

Պատվիրակությունը նաև հանդիպեց տարբեր համայնքների ղեկավարների, աշխատակիցների հետ: Ծանոթացավ զբոսաշրջության զարգացման ոլորտում առկա մարտահրավերներին, լուծման ուղիներին, լավագույն փորձին:

Ուսումնական այցի ավարտին մասնակիցներն ամփոփեցին այցելության արդյունքները: Որոշում կայացվեց շարունակել համագործակցությունը Տավուշի Տուրիզմի Զարգացման Գործակալության հետ, առաջարկություններ ներկայացնել Տավուշում զբոսաշրջության զարգացման ընդհանրական մոտեցման մասին և ՀԿ-ի աջակցությամբ իրականացնել մարզում զբոսաշրջության զարգացմանը նպաստող միասնական նախաձեռնություններ:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ Վ.ՂԱԼՈՒՄՅԱՆ